հետևեալ սրտաշարժ տողերը։ Իր տկար վիճակին մէջ՝ անգամ մը կը կանչուի մա-համերձի մը քով. Հ. Եղիա անձնանուէր հովուի մը եռանդով կը փութայ խսկոյն. կը խոստովանցնէ, կը հաղորդէ հիւանդը ու ժամ մը կը ստիպուի անոր քով մնալ. « և՝ յետ այսմ – կ՝ըսէ – եկին ոմանք անձինք հանդերձ նոտարիւն, և մինչ սկսաւ « նոտարն գրել՝ ես վերստին տկարացայ, և մինչ տեսին զիս ի յայսպիսի տկարու-« թեան՝ հարկադրեցին զիս ընկողմանիլ ի վերայ միոյ մահճի, և այսպէս առնելով « ընդ երկար ժամանակ, հազիւ կարաց խելս ի գլուխս գալ »։

Արդիւնազարդ հովիւը նկատի առնելով ժողովուրդին բարիքը՝ դեռ չմեկնած իր սիրելի պաշտօնատեղիէն՝ հարկ կը համարի իր յաջորդին համար գծել հետևելիք կարևոր կէտեր – որոնք արդիւնք են իր իմաստուն և փորձ պաշտօնավարութեան – յաջող և արդիւնաբեր ընելու անոր գործունէութիւնը։

Իր ամբողջ նամակին ընթացքէն կ՝երևի սակայն, որ այդ խրատները կու տայ՝ առանց որոշապէս տեղեակ ըլլալու թէ ո՛վ յաջորդ պիտի կարգուի իրեն։

Կը տեղեկագրէ նաև սոյն նամակով բաւական լուրջ քաղաքական դէպքեր։

Գերայարգելոյ և վսեմագունեղի տեառն տեառն
Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի և Աբբայ Հօրն մերում

. . . . Նաև յետ յայսմ յայտ առնեմ զայս՝ առ քոյդ խոհեմութիւն, զի եթէ տէրն կամիցի ի գալն աստ նոյնոյ համանշանեցելոյ [1] անձին, նախապէս զոմանս խրատս տալի է նմա, որպէս զի այնու թերևս զգուշասցի այնպիսեաց անպատեհից շարժմանց, որովհետև ըստ ինքեան ներ յայսպիսուում պաշտօնի այնպիսաբար վարիլն ոչ է բարի, որք և են այսոքիկ։ Նախկին է այս, զի ի մէջ քարոզին, նաև ի սեղանոջ ուրուք ոչ է լաւ յիշել թարց իմիք հարկաւորութեան զարհեստական հուրն, նաև զարիւսեկն դժոխոց։ Երկրորդ, զի որքան կարելի է ջանայցէ ընդ ժողովրդեանն սիրով և հեզութեամբ վարիլ։ Երրորդ՝ զի ի մէջ քարոզին, նաև յարտաքոյ նորին ոչ է հարկ ներ այսքան ազանց, զազգն իւր պախարակել, զի յայսպիսեաց բանից ժողովուրդն կարի յոյժ խորշին, նաև զմեծագոյն պատկառանս կրեն։ Չորրորդ, զի զեղանակ ընթերցման աւետարանին ուղղելի է, զի ոչ է լաւ գյունական եղանակաւն ընթեռնուլ զաւետարանն։ Հինգերորդն է, զի ներ սրբոյ պատարագին ոչ է հարկ այնքան տարածմամբ ձեռօք ասել զաղօթն, լաւ է բազմաց հետևիլ, քան թէ միոյն։ Վեցերորդ, զի ի մէջ քարոզին ոչ է այնքան հարկ ի վեր քան զչափն պօռալ։ Եօթներորդ, զի ներ խոստովանութեանն ոչ է լաւ և ոչ է բարի, զի զխոստովանողն զայրացմամբ յանդիմանել, և թարց արձակման այսու պատճառաւ յետս դարձուցանել, թէ ոչ գիտեն զհաւատամն, ... և այլն։

Ութերորդ, ջանալի է հոգունակաբար զգուշանալ ի սնափառութենէ և ի բարդաբանութենէ, զի ի յայսպիսուց խոսակցութենէ՝ ոչ երբէք հետևին բարիք, այլ մանաւանդ չարիք։ Իններորդ, զի զբարկութիւնն իւր սակաւ ինչ ջանայցէ մեղմացուցանել, և ընդ տիրացու յակոբին մեղմաբար վարիլ, զի նա ինքեան պիտոյ է։ Տասներորդ, զի յոյժ բարի լինէր ինքեան, եթէ յաւուր առաջ զաւետարանն, զգիրքն, և զշարականն տես արասցէ քանի մի անգամ ընթեռնլով, մանաւանդ զյաւետարանն։ Այլ և զբարեկենդանն պարտի ըստ լաթինացւոց առնել, այսինքն յերեքշաբթի աւուրն, նաև ի չորեքշաբթի աւուրն կերիցէ զմիս, զի աստ բաց ի յոմանց սակաւուց անձանց պէքեառից, թէ տեղացիք իցեն, և թէ վաճառականք, ամենեքին ըստ լաթինացւոց առնեն. և այնք որք ոչ ուտեն, չեն ի համարի։ . . . Ես յառաջնում տարւոջն զչորեքշաբթին պահէի, նաև

1. Անձին ընտրութեան դեռ հաստատապէս ծանօթ չէ Հ. Եղիա Վարդապետ, ինչպէս որ ըսինք։